ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս ----------էջ 3
2. Ամփոփագիր ----------էջ 5
3. Հաշվեքննության հիմնական արդյունքները ---------- էջ 7
4. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ----------էջ 27
5.Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր ----------էջ 28
6.Եզրակացություններ----------էջ 29
7. Առաջարկություն ----------էջ 30

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 132-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:
Հաշվեքննության առարկան	Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի 2021 թվականի երեք ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	1. ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում: 2. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք: 3. ՀՀ կառավարության 09.07.2020 թվականի «ՀՀ վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու, ՀՀ 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» թիվ 1154-Ն որոշում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի մայիսի 19-ից մինչև 2021 թվականի հուլիսի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան

կատարման հաշվեքննության ուղեցույցի, ՀՀ հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանումը

Հաշվեքննությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) 2021 թվականի պետական բյուջեի տարեկան պլանը կազմել է 27,329,118.80 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 27,504,789.40 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի (2021 թվականի երեք ամիսների) պլանը կազմել է 6,734,256.70 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 6,804,185.30 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 4,812,728.61 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 4,494,065.28 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 4,891,341.32 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 66.05%-ով:

Աշխատակազմում 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննությունն իրականացվել է վեց միջոցառման շրջանակներում՝ ընդամենը 2,743,320.29 հազ. դրամ դրամարկղային ծախսով:

Ըստ առանձին միջոցառումների՝ հաշվեքննության ընթացքում արձանագրվել են հետևյալ փաստերը՝

1. 1136-11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման շրջանակներում չեն պահպանվել Աշխատակազմի և ընտրված երեք կազմակերպությունների՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի, «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի, «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի միջև կնքված դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագրերի 3.6 և 3.8 կետերի պահանջները՝ չի ներկայացվել կանխավճարային վճարման հայտը և չօգտագործված գումարի մասով չեն նվազեցվել յուրաքանչյուր ամսվա վճարումները:

2. 1136-11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման շրջանակներում չեն պահպանվել Աշխատակազմի և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագրի 3.4 կետի պահանջը՝ հունվար, փետրվար և մարտ ամիսներին պայմանագրի մասով նախատեսված փաստաթղթերը ԾԿԳ չեն ներկայացվել և այդ ամիսների համար պայմանագրով նախատեսված կարգով վճարումներ չեն կատարվել:

3. 1223-11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման շրջանակներում չի պահպանվել Աշխատակազմի և

«STEPTOE & JOHNSON» ընկերության միջև կնքված պայմանագրի 5.1 կետի պահանջը՝ վճարումը չի կատարվել ըստ վճարման ժամանակացույցի:

4. 2021 թվականի երեք ամիսների ընթացքում Աշխատակազմի 696 հաստիքից, ըստ ամիսների, համապատասխանաբար 156, 157, 162 հաստիք չի համալրվել:

Լ. Յոլյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ
-.07.2021թ.
ՀՀ հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան, 19 փող., ք. Երևան, Հայաստան

3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աշխատակազմի 2021 թվականի երեք ամիսների ճշտված պլանը կազմել է 6,804,185.30 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 4,812,728.61 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 4,494,065.28 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 4,891,341.32 հազ. դրամ:

Ստորև ներկայացվում է հաշվեքննությամբ ընդգրկված միջոցառումների վերաբերյալ ֆինանսական տեղեկատվությունը.

Աղյուսակ 1

Հաշվեքննությամբ ընդգրկված միջոցառումներ

հազ. դրամ

N	Ծրագիր, միջոցառում, հոդված				Փաստ
1	1018-32001	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում	5129	Այլ մեքենաներ և սարքավորումներ	329,896.62
2	1136-11001	Ծառայությունների, ծրագրերի համակարգում	4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	360,861.92
3	1136-11011	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր	4521	Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություն ներին	623,378.16
4	1136-31004	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռքբերում	5129	Այլ մեքենաներ և սարքավորումներ	942,010.42
5	1223-11001	Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ	4861	Այլ ծախսեր	356,073.17
6	1223-12002	Միջազգային արբիտրաժային տրիբունալի կամ օտարերկրյա ներպետական դատարանի ծախսերի վճարում	4861	Այլ ծախսեր	131,100.00
ԸՆԴԱՄԵՆԸ					2,743,320.29

Ծրագիր՝ 1018 «Պետական հատվածի արդիականացման ծրագիր»

Միջոցառում՝ 32001 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում»

Հոդված՝ 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ»

2021 թվականի պետական բյուջեով 32001 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում» միջոցառման 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով առաջին եռամսյակի ճշտված պլանը կազմել է 456,661.80 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 52,000.0 հազ. դրամ, փաստը և փաստացի ծախսը՝ 329,896.62 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 72,24%:

31.12.2020 թվականի դրությամբ ծրագրի հատուկ հաշվի մնացորդը կազմել է 1,500.0 հազ. ԱՄՆ դոլար:

32001 միջոցառման վճարված գումարը մինչև 31.12.2020 թվականը կազմել է 3,872,756.21 հազ. դրամ կամ 8,021.59 հազ. ԱՄՆ դոլար:

Ծրագրի նպատակն է հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավումը:

Վերը նշված միջոցառման 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով կնքված պայմանագրերի շրջանակներում 2021 թվականի առաջին եռամսյակում կատարված վճարումներն իրականացվել են 6 պայմանագրի շրջանակներում, որոնք ներկայացվում են ներքոնշյալ աղյուսակով.

Աղյուսակ 2.

1018-32001 միջոցառման 2021 թվականի առաջին եռամսյակում կատարված վճարումների վերաբերյալ

Հ/Հ	Ընթացակարգի ծածկագիր	Գնման առարկայի նկարագրությունը	Գնման ձևը	Մասնակիցները	Հաղթող կազմակերպությունը	Պայմանագրի գումարը ԱԱՀ-ն ներառյալ		Պայմանագրի կնքման օրը		Փաստացի վճարումները կատարված 2021թ. 1-ին եռամսյակի ընթացքում /հազ. դրամ/	
						Սկզբնական գումարը	Փոփոխություններ	Սկիզբ	Ավարտ	Վարկային միջոցներ	Համաֆինանսավորում
1	PSMP3-GO-2-2-9/A-3	ՀՀ ոստիկանության համար Երևանում, Գյումրիում ու Վանաձորում օպերատիվ կառավարման պիլոտային համակարգերի ներդրման և պահանջվող սարքավորումների ձեռքբերում			Համատեղ ձեռնարկություն SOS Systems LLC, X-Art LLC, Smart Production LLC and GEOMAPIS LLC	376,911.60 հազ. դրամ	673,458.0 հազ. դրամ	16.08.19	13.04.21	133,506.0	26,701.20
2	PSMP3-GO-2-2-6/1	Էլեկտրոնային նորմատիվ իրավական ակտերի համակարգի մատակարարում և տեղադրում			Համատեղ ձեռնարկություն VXSoft Limited և Unicomp CJSC	284,615 Եվրո և 69,366.0 հազ. դրամ	568,615 Եվրո և 69,366.0 հազ. դրամ	15.01.19	01.05.21	66,802.04	1,156.10
3	PSMP3-GO-2-2-17	Փաստաթղթերի վավերականացման և անձնական էլ. գրասենյակի համակարգի մատակարարում և տեղադրում	Միջազգային մրցակցային մրցույթ	1. Softengi Ukraine LLC (Ուկրաինա); 2. ՀՁ VXSOFT Limited (Իռլանդիա) և VXSOFT LLC (Հայաստան)	ՀՁ VXSOFT Limited (Իռլանդիա) և VXSOFT LLC (Հայաստան)	430,000 Եվրո		24.11.20	01.02.22	48,566.79	-
4	PSMP3-GO-2-2-10	Անհատական և հրապարակային ծանուցումների միասնական E-Notification համակարգի մատակարարում և տեղադրում	Միջազգային մրցակցային մրցույթ	1. Softengi Ukraine LLC (Ուկրաինա) 2. ՀՁ "Harmony" ITED Fund (Հայաստան) և Helix Consulting LLC (Հայաստան)	ՀՁ "Harmony" ITED Fund (Հայաստան) և Helix Consulting LLC (Հայաստան)	267,268.0 հազ. դրամ		25.11.20	2.02.22	24,237.20	4,847.44

5	PSMP3 -GO-2-2-22/2	Իրավապահ և այլ պետական մարմինների համար SS սարքավորումների ձեռքբերում (Լոտ 2)	Ազգային մրցակցային մրցույթ	«Էֆ-Լայն Թրեյդինգ» ՍՊԸ	«Էֆ-Լայն Թրեյդինգ» ՍՊԸ	25,673.70 հազ. դրամ		25.12.20	25.03.21	18,420.50	3,684.10
6	PSMP3 -GO-2-2-22/3	Իրավապահ և այլ պետական մարմինների համար աուդիո-վիդեո սարքավորումների ձեռքբերում	Գնումներ	«Գրիման» ՍՊԸ; «Էլկոմպ» ՍՊԸ	«Գրիման» ՍՊԸ	1,055.70 հազ. դրամ		29.12.20	28.01.21	879.75	175.95
	Ընդամենը վճարումներ									292,412.29	36,564.79
	Ընդամենը									328,977.08	

Համաձայն վերոնշյալ աղյուսակի՝ 2021 թվականի առաջին եռամսյակում ընդամենը կատարված վճարումների ընդհանուր գումարը (դրամարկղային ծախսը) կազմել է 328,977.08 հազ. դրամ, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունների համակարգից (LSREP) արտահանված 2021 թվականի առաջին եռամսյակի բյուջետային ծախսերի կատարման մասին հաշվետվության՝ դրամարկղային ծախսը կազմել է 329,896.62 հազ. դրամ: Աշխատակազմի կողմից, որպես տարբերության հիմնավորում, ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան գրությունը, համաձայն որի 2021 թվականի մարտի 1-ից սկսած փոփոխություն է կատարվել արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով իրականացվող հայկական դրամի փոխարկման հետ կապված:

Ծրագիր՝ 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»

Միջոցառում՝ 11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում»

Հոդված՝ 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»

2021 թվականի պետական բյուջեով 11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով առաջին եռամսյակի ճշտված պլանը և ֆինանսավորումը կազմել է 436,849.90 հազ դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 360,861.92 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 504,024.73 հազ. դրամ:

Համաձայն ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից տրամադրված Client-Treasury համակարգից արտահանված տեղեկանքի՝ 4111 հոդվածով կատարված դրամարկղային ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝

Աղյուսակ 3.

1136-11001 միջոցառման 2021 թվականի առաջին եռամսյակում կատարված վճարումների (դրամարկղային ծախս) վերաբերյալ

հազ. դրամ

Վճարման նպատակ	Հունվար	Փետրվար	Մարտ	ԸՆԴԱՄԵՆԸ
Աշխատավարձ	-	92,297.10	101,072.53	193,369.63
Եկամտային հարկ		34,528.80	36,142.43	70,671.22
Սոցիալական վճար		5,744.18	5,773.05	11,517.23
Դրոշմանիշային վճար		2,205.00	2,373.50	4,578.50
Արձակուրդային վճար	8,396.97	12,162.00	16,103.27	36,662.24
Պարգևավճար	398.65	12,787.28	10,179.86	23,365.79
Վերջնահաշվարկ	5,434.57	6,532.57	1,100.74	13,067.88
Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստ	564.52	3,898.41	1,898.37	6,361.29
Օգնություն		391.56		391.56
Թաղման նպաստ	114.42	446.45	493.40	1,054.27
Անդամավճար		155.94	187.02	342.96
ԸՆԴԱՄԵՆԸ	14,909.13	171,149.29	175,324.16	361,382.57

Client-Treasury համակարգից արտահանված տեղեկանքի համաձայն՝ 361,382.57 հազ. դրամից 520.65 հազ. դրամը հաշվետու ժամանակահատվածում ծախսի վերաձևակերպում է:

Համաձայն ՀՀ վարչապետի 11.02.2021 թվականի թիվ 121-Ա որոշման՝ Աշխատակազմի հաստիքների քանակը սահմանվել է 696: Աշխատակազմի կողմից

տրամադրված ՀԾ-ից արտահանված առաջին երեք ամիսների ընդլայնված հաշվետվության՝ աշխատակիցների քանակը հունվար-մարտ ամիսներին կազմել է համապատասխանաբար 540, 539, 534 հաստիք:

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 15.01.2020թ. «Տրանսպորտային ծախսերի փոխհատուցում հատկացնելու մասին» թիվ 21-Ա հրամանով Վարչապետի աշխատակազմի պաշտոնատար անձանց 2020թ. հունվարից մինչև դեկտեմբերը ներառյալ յուրաքանչյուր ամիս տրանսպորտային միջոցի փոխարեն հատկացվելու է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում 60.0 հազ. դրամ (գումարի մեջ չեն ներառվում վճարվող հարկերը և նպատակային սոցիալական վճարները):

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 23.12.2020 թվականի «Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի հունվարի 15-ի թիվ 21-Ա հրամանում փոփոխություններ կատարվելու մասին» թիվ 2093-Ա հրամանի հավելվածի 2-րդ, 25-րդ և 27-րդ կետերն ուժը կորցրած են ճանաչվել (վարչապետի աշխատակազմի պաշտոնատար անձանց ցանկը 27-ից դարձել է 24):

4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով ծախսերի արժանահավատության գնահատման նպատակով ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 93-Լ որոշմամբ հաստատված մեթոդաբանության համապատասխան կատարվել է ընտրանք՝ կիրառելով Դրամական միավորի ընտրանքի մեթոդը: Ուսումնասիրվել է ընտրված 16 աշխատակիցների աշխատավարձի հետ կապված իրավական ակտերի, ինչպես նաև կատարված հաշվարկների (եկամտային հարկ, դրոշմանիշային և սոցիալական վճարներ) ուսումնասիրություն, որի արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

ԾՐԱԳԻՐ՝ 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր»

Հոդված՝ 4521 «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին»

2021 թվականի պետական բյուջեով 11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման 4521 «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով առաջին եռամսյակի ճշտված պլանով նախատեսվել է 958,372.0 հազ դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 270,000.0 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը) և փաստացի ծախսը՝ 623,378.16 հազ. դրամ:

«Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների» վարկային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև կնքվել է 2014թ. օգոստոսի 6-ին: Այն վերաձևակերպվել է 2020թ. հունվարի 10-ին: 2020 թվականի հոկտեմբերի 29-ի վարկային համաձայնագրի փոփոխության համաձայն վարկի սկզբնական գումարը 50.000.0 հազ. ԱՄՆ դոլարից նվազել է՝ դառնալով 48,000.0 հազ. ԱՄՆ դոլար:

Հատուկ հաշվի մնացորդը 31.12.2020 թվականի դրությամբ կազմել է 1,184.74 հազ. ԱՄՆ դոլար, վարկի դուրս չգրված գումարը (մնացորդը) կազմել է 34,626.08 հազ. ԱՄՆ դոլար:

Վերոնշյալ հոդվածով 2021 թվականի առաջին եռամսյակում կատարվել են վճարումներ, որը ներկայացվում է ներքոնշյալ աղյուսակում:

Աղյուսակ 4

1136-11011 միջոցառման 2021 թվականի առաջին եռամսյակում կատարված վճարումների վերաբերյալ

հազ. դրամ

հ/հ	Կազմակերպություն	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
1	Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի գործունեության ծախսեր և ենթադրամաշնորհներ	94,247.59	43,026.29	137,273.88
2	«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ	299,153.66	183,895.86	483,049.52
3	Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամի գործունեության ծախսեր և ենթադրամաշնորհներ	770.32	511.16	1,281.48
Ընդամենը վճարումներ		394,171.58	227,433.31	621,604.89

2021 թվականի առաջին եռամսյակում 4521 հոդվածով ընդամենը կատարված վճարումների ընդհանուր գումարը (դրամարկղային ծախսը) կազմել է 621,604.89 հազ. դրամ, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունների համակարգից (LSREP) արտահանված 2021 թվականի առաջին եռամսյակի բյուջետային ծախսերի կատարման մասին հաշվետվության՝ դրամարկղային ծախսը կազմել է 623,378.16 հազ. դրամ: Աշխատակազմի կողմից, որպես տարբերության հիմնավորում, ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան գրությունը, համաձայն որի 2021 թվականի մարտի 1-ից սկսած փոփոխություն է կատարվել արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով իրականացվող հայկական դրամի փոխարկման հետ կապված:

Թիվ 8390-ԱՄ վարկային պայմանագրով նախատեսվող որոշ աշխատանքները իրականացնելու նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի և ընտրված երեք կազմակերպությունների՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ» (ՁԻՀ), «Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամ», «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ միջև կնքվել են դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագրեր:

1. **«Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»**

Աշխատակազմը և «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ը կազմակերպության կանոնադրական նպատակների իրականացման աջակցության նպատակով 2020թ. մայիսի 4-ին կնքել են դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագիր:

Պայմանագրի առարկան վարկային համաձայնագրով նախատեսված պետական – մասնավոր գործընկերությունների (ՊՄԳ) և համաֆինանսավորվող դրամաշնորհների իրականացման նպատակով կազմակերպության գործառնական ծախսերի փոխհատուցումն է:

Պայմանագրով սահմանված չափով և կարգով կազմակերպությանը տրամադրվում է դրամաշնորհ գործառնական ծախսերի կատարման համար: Դրամաշնորհի գումարը կազմում է գործառնական ծախսերի ընդհանուր գումարը:

Յուրաքանչյուր տարվա համար կազմակերպությունը ծրագրի կառավարման գրասենյակին (ԾԿԳ) է ներկայացնում տարեկան նախահաշիվը:

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի և ՀՀ վարչապետի աշխատակազմի միջև 2021 թվականի փետրվարի 2-ին կնքել են դրամաշնորհի պայմանագրեր 7 կազմակերպությունների հետ:

2021 թվականի առաջին եռամսյակում նշված կազմակերպությունները պայմանագրով ստանձնած պարտականությունների կատարման նպատակով ստացել են կանխավճարներ, որոնք ներկայացվում են ներքոնշյալ աղյուսակում :

Աղյուսակ 5.

«Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակում տրված կանխավճարներ

հազ. դրամ

Պայմանագիր	Կազմակերպություն	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	ԸՆԴԱՄԵՆԸ
01/2020/IMG	«ԷԼՍԻ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍՊԸ	4,582.81	2,905.19	7,488.0
02/2020/IMG	«ՆԱԻՐԻ ՍԹԵՄ» ՍՊԸ	3,404.96	635.44	4,040.40
03/2020/IMG	«ՍԹԵՄ ԴԻԴԱԿՏԻԿՍ»	4,673.42	868.58	5,542.00

	ՍՊԸ			
04/2020/IMG	«ՕՕՐԵՍ» ՍՊԸ	4,767.25	2,732.75	7,500.00
05/2020/IMG	«ՌԵՎԱԼՔՈՆ» ՍՊԸ	4,650.06	832.44	5,482.50
06/2020/IMG	«ՎԵԼՎԻՈ» ՍՊԸ	1,402.70	517.30	1,920.00
07/2020/IMG	«ՈՒԱՅՐՍՏՈՔ» ՍՊԸ	5,229.0	2,244.96	7,473.96
ԸՆԴԱՄԵՆԸ		28,710.20	10,736.66	39,446.86

Համաձայն դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագրի 3.4 կետի՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին կազմակերպությունը աշխատակազմին կներկայացնի հարկային հաշիվ տվյալ ամսվա ընթացքում կատարած ծախսերի գումարի չափով:

Համաձայն պայմանագրի 3.6 կետի՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին հաջորդող մինչև 3-րդ աշխատանքային օրը կազմակերպության կողմից ԾԿԳ-ին է ներկայացվում հաշվետվություն նախորդ ամսվա ծախսերի վերաբերյալ (ներառյալ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի պատճենները): Համաձայն պայմանագրի 3.7 կետի, նշված փաստաթղթերը ստանալուց հետո, ԾԿԳ-ն 5 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է դրանց համապատասխանությունը պայմանագրի, համապատասխան գործառնական ձեռնարկի և տարեկան նախահաշվի պայմաններին: Անհամապատասխանությունների դեպքում կազմակերպությունը գրավոր կարգով տեղեկացնում է և հնարավորություն է ընձեռվում նրան տրամադրել լրացուցիչ փաստաթղթեր և բացատրություններ, կատարել ուղղումներ: Ստուգումը ավարտելուց հետո ԾԿԳ-ն հաստատում է հաշվետվությունը:

Համաձայն պայմանագրի 3.8 կետի՝ յուրաքանչյուր ամսվա վճարումները նվազեցվում են նախորդ ամսվա անընդունելի ծախսի գումարի չափով կամ չօգտագործված գումարի մասով:

10.02.2021 թվականի համապատասխան հանձնարարականով նշված գումարները վճարվել են կազմակերպությանը, չնայած հաշվի վրա առկա էր պահանջվածից ավելի չօգտագործված գումար:

Առաջին եռամսյակի հաջորդ ամիսներին նույնպես չօգտագործված գումարի մասով ամսվա վճարումներից նվազեցումներ չեն կատարվել և ամբողջությամբ բավարարվել են ծախսի փոխհատուցման կազմակերպության գրությունով պահանջվող գումարը:

Համաձայն պայմանագրի 3.6 կետի՝ յուրաքանչյուր ամսվա հաշվետվությունը հաստատելուց հետո և կազմակերպության կողմից հաջորդ ամսվա հայտ ներկայացնելու դեպքում, 5 աշխատանքային օրվա ընթացքում ԾԿԳ-ն իրականացնում է հաջորդ ամսվա համար կանխավճարային վճարում, որը 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում չի կիրառվել:

2. «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ

Աշխատակազմը և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲ ընկերությունը 15.05.2020 թվականին կնքել են դրամաշնորհի հատկացման վերաբերյալ TPQI – ANIF – OP պայմանագիրը:

Յուրաքանչյուր տարվա համար կազմակերպությունը ԾԿԳ-ին է ներկայացնում համապատասխան տարեկան ծախսերի նախահաշիվը:

2021 թվականին «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ին վարկային ծրագրի միջոցների հաշվին կատարվող գործառնական ծախսերի նախահաշվով նախատեսվել է ծախսեր հետևյալ բաղադրիչներով.

ԲԱՂԱԴՐԻՉ 1 գործառնական ծախսեր

ԲԱՂԱԴՐԻՉ 2 ներկայացուցչություններ (Մոսկվա, Փարիզ, Աբու Դաբի)

ԲԱՂԱԴՐԻՉ 3 սարքավորումների գնում, հաղորդակցման և PR կապերի իրականացում

Վերոնշյալ բաղադրիչներով նախահաշվով նախատեսված ծախսերը ներկայացվում են ներքոնշյալ աղյուսակում:

Աղյուսակ 6.

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի նախատեսված ծախսերը ըստ բաղադրիչների

ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	Ծախս, հազ. դրամ		
	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	ԸՆԴԱՄԵՆԸ
Բաղադրիչ 1	283,555.00	155,931.68	439,486.68
Բաղադրիչ 2	225,915.00	153,365.32	379,280.32
Բաղադրիչ 3	109,250.00	21,850.00	131,100.00
ԸՆԴԱՄԵՆԸ	618,720.00	331,147.00	949,867.00

հազ. դրամ

11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» միջոցառման 4521 «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի ծախսերը կազմել են.

Աղյուսակ 7

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի առաջին եռամսյակի ծախսերը

հազ. դրամ

Բաղադրիչներ	Հունվար			Փետրվար			Մարտ		
	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը

1	29,638.30	17,240.70	46,879.00	31,171.41	18,717.11	49,888.52	37,421.03	18,885.37	56,306.40
2	30,415.49	26,421.79	56,837.28	86,058.54	57,767.35	143,825.89	60,056.47	28,727.58	88,784.05
3	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդ.	60,053.79	43,662.49	103,716.28	117,229.95	76,484.46	193,714.41	97,477.50	47,612.95	145,090.45

ՀԲ վարկային միջոցներից	– 274, 761.24 հազ.դրամ
ՀՀ համաֆինանսավորման միջոցներից	– 167,759.90 հազ.դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ	– 442,521.14 հազ.դրամ

Եռամսյակի առաջին երկու ամսվա ծախսերը վճարվել են փետրվարի 18-ին և մարտի 17-ին՝ 103,716.28 հազ.դրամ և 193,714.41 հազ. դրամ: Միաժամանակ փետրվարի 3-ին վճարվել է դեկտեմբերի ծախսերը՝ 185,618.79 հազ. դրամ: Եռամսյակի ընթացքում իրականացվել է ընդամենը 483,049.48 հազ. դրամ վճարում: Մարտ ամսվա ծախսի վճարումը իրականացվել է ապրիլին, որը կազմել է 145,090.45 հազ. դրամ:

Հունվար ամսին, ինչպես նաև հաջորդ ամիսներին, չնայած հաշվին առկա է եղել պահանջվածից ավելի գումար՝ վճարման համապատասխան հանձնարարականներով, իրականացվել է պահանջված գումարների ամբողջությամբ վճարում:

Համաձայն պայմանագրի 3.6 կետի՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին հաջորդող մինչև երրորդ աշխատանքային օրը կազմակերպության կողմից ԾԿԳ-ին է ներկայացվում դրամական հոսքերի մասին հաշվետվություն (ներառյալ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի պատճեները): Փաստաթղթերը ստանալուց հետո, ըստ պայմանագրի 3.7 կետի ԾԿԳ-ն հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է դրանց համապատասխանությունը պայմանագրի, համապատասխան գործառնական ձեռնարկի և տարեկան նախահաշվի պայմաններին: Թերություններ, սխալներ հայտնաբերելու դեպքում կազմակերպությունը գրավոր կարգով ԾԻԳ-ի կողմից տեղեկացնում է այդ մասին՝ հնարավություն ընձեռելով նրան տրամադրել լրացուցիչ փաստաթղթեր և բացատրություններ, կատարել ուղղումներ:

Պայմանագրի 3.6 կետի համաձայն հաշվետվությունը հինգ օրվա ընթացքում ԾԿԳ-ի կողմից հաստատվելուց հետո և կազմակերպության կողմից հաջորդ ամսվա հայտ ներկայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում ԾԿԳ-ն իրականացնում է հաջորդ ամսվա համար կանխավճարային վճարում:

Համաձայն պայմանագրի 3.8 կետի՝ յուրաքանչյուր ամսվա վճարումները նվազեցվում են 3.6 կետով սահմանված նախորդ ամսվա անընդունելի ծախսի գումարի չափով կամ չօգտագործված գումարի մասով:

Չօգտագործված գումարի մասով ամսվա վճարումներից նվազեցումներ չեն կատարվել և ամբողջությամբ բավարարվել են ծախսի փոխհատուցման կազմակերպության գրությամբ նշված գումարը:

Պայմանագրով նախատեսված վճարումներից նվազեցման և հաջորդ ամսվա ծախսերի համար կանխավճարային վճարում կատարելու հայտ ներկայացնելու գործիքների չգործադրումը նվազեցնում է ԾԿԳ-ի հնարավորությունները ազդելու հաջորդ ամսվա իրականացվելիք ծրագրերի պլանավորմանը՝ նախահաշվով նախատեսված ծախսերի շրջանակում:

3. «**Ներդրումների աջակցման կենտրոն**»

Աշխատակազմը և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը 2020 թվականի մայիսի 15-ին կնքել են դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայամանագիր:

Պայմանագրի առարկան վարկային համաձայնագրով նախատեսված համաֆինանսավորվող դրամաշնորհների իրականացման նպատակով կազմակերպության գործառնական ծախսերի ֆինանսավորումն է:

Դրամաշնորհի գումարը կազմում է գործառնական ծախսերի ընդհանուր գումարը:

Յուրաքանչյուր տարվա համար կազմակերպությունը ԾԿԳ-ին է ներկայացնում ծախսերի տարեկան նախահաշիվ:

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը 2021 թվականի համար գործառնական ծախսերի տարեկան նախահաշվով ներկայացրել է ծախսեր հետևյալ բաղադրիչներով.

ԲԱՂԱԴՐԻՉ 1 անձնակազմի վարձատրություն
ԲԱՂԱԴՐԻՉ 2 գործուղման ծախսեր
ԲԱՂԱԴՐԻՉ 3 ծառայություններ

Գործառնական ծախսերի տարեկան նախահաշվով վերոնշյալ բաղադրիչներով սպասվող ծախսերը ներկայացվում են ներքոնշյալ աղյուսակում:

Բաղադրիչներ	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	ԸՆԴԱՄԵՆԸ
Բաղադրիչ 1	12,320.86	8,331.62	20,652.48
Բաղադրիչ 2	1,900.00	380.00	2,280.00
Բաղադրիչ 3	6,200.00	1,240.00	7,440.00

ԸՆԴԱՄԵՆԸ	20,420.86	9,951.61	30,372.48

Աղյուսակ 8.

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի ծախսերն ըստ բաղադրիչների

հազ. դրամ

11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» միջոցառման 4521 «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով 2021թ. առաջին եռամսյակի ընթացքում «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի ծախսը կազմել է՝

ՀԲ վարկային միջոցներից	– 2,606.41 հազ.դրամ
ՀՀ համաֆինանսավորման միջոցներից	– 1,193.55 հազ.դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ	– 3,799.96 հազ.դրամ

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը՝ հունվար, փետրվար և մարտ ամիսներին, պայմանագրով նախատեսված փաստաթղթերը ԾԿԳ չի ներկայացրել և այդ ամիսների համար պայմանագրով նախատեսված կարգով վճարումներ չի իրականացվել:

Վճարումը իրականացվել է մայիս ամսին: Խախտվել է պայմանագրի 3.4, 3.6, 3.8 կետերի պահանջները:

Առաջին եռամսյակի ընթացքում իրականացվել է վճարում դեկտեմբեր ամսվա ծախսերի համար, որը կազմել է 1,281.48 հազ.դրամ:

Ծրագիր՝ 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»

Միջոցառում՝ 31004 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռքբերում»

Հոդված՝ 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ»

2021 թվականի պետական բյուջեով 31004 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռքբերում» միջոցառման առաջին եռամսյակի ճշտված պլանով 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով նախատեսվել է 1,456,154.0 հազ. դրամ, ՀՀ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորվել է 125,000.0 հազ. դրամ, որից ծախսվել է 124,560.6 հազ. դրամ (համաֆինանսավորում): Փաստը (դրամարկղային ծախսը) և փաստացի ծախսը կազմել է 942,010.42 հազ. դրամ:

31.12.2020թ. դրությամբ ծրագրի հատուկ հաշվի մնացորդը կազմել է 1,184,741.65 ԱՄՆ դոլար:

Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 64,69 %:

Ծրագրի նպատակն է հզորացնել ընկերությունների արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և որակի կառավարման ծառայությունների տրամադրման Վարկառուի կարողությունը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

1. Առևտրի խթանման և որակի համակարգերի արդյունավետության բարելավում
2. Ներդրումների և արտահանման խթանում
3. Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում
4. Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում

31004 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռքբերում» միջոցառման 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով 2021 թվականի առաջին եռամսյակում կատարված վճարումներն իրականացվել են թվով 3 պայմանագրի շրջանակներում, որոնք ներկայացվում են ներքոնշյալ աղյուսակով:

Աղյուսակ 9.

1136-31004 միջոցառման 2021 թվականի առաջին եռամսյակում կատարված վճարումների վերաբերյալ

հազ. դրամ

Հ/Հ	Կազմակերպություն	Պայմանագրի համար	ՀԲ վարկային միջոցառումներից (075400000908)	ՀԲ վարկային միջոցառումներից (900000908302)	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
1	«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ	TPQI-G-2.3.1.2/1 12.05.2020	624,884.41	622,803.00	124,560.60	747,363.60
2	«Agrotec SpA» (Իտալիա)	TPQIP-G-3.1.2.1/LOT2 14.02.2020	38,680.75	38,680.75		38,680.75
3	«Արփա Սևան» ԲԲԸ	TPQI-G-3.1.2.1/1 12.11.2020	153,884.66	152,355.39		152,355.39
	Ընդամենը վճարումներ		817,449.82	813,839.14	124,560.60	938,399.74

Համաձայն վերոնշյալ աղյուսակի՝ 2021 թվականի առաջին եռամսյակում կատարված վճարումների ընդհանուր գումարը (դրամարկղային ծախսը) կազմել է 938,399.74 հազ. դրամ, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունների համակարգից (LSREP) արտահանված 2021 թվականի առաջին եռամսյակի բյուջետային ծախսերի կատարման մասին հաշվետվության՝ դրամարկղային ծախսը կազմել է 942,010.42 հազ. դրամ: Աշխատակազմի կողմից, որպես տարբերության հիմնավորում, ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան գրությունը, համաձայն որի 2021 թվականի մարտի 1-ից սկսած փոփոխություն է կատարվել արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով իրականացվող հայկական դրամի փոխարկման հետ կապված:

Ծրագիր՝ 1223 «Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում»

Միջոցառում՝ 11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ»

Հոդված՝ 4861 «Այլ ծախսեր»

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով 11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման 4861 «Այլ ծախսեր» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է 599,324.20 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 359,933.45 հազ.դրամ, փաստը՝ (դրամարկղային ծախս)՝ 356,073.17 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 356,093.39 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 59.4%-ով:

Միջազգային դատարանում, միջազգային արբիտրաժում և այլ միջազգային ատյաններում Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայությունների մատուցման դիմաց կատարվել է 5 կազմակերպություններին վճարումներ, որոնք ներկայացվում են ներքոնշյալ աղյուսակում.

Աղյուսակ 10

1223-11001 միջոցառման 2021 թվականի առաջին եռամսյակում կատարված վճարումների վերաբերյալ

h/h	Կազմակերպության անվանումը	Վճարման ամսաթիվը	Նպատակը	Հազ. ԱՄՆ դոլար	Հազ. դրամ

1	Steptoe & johnson LLP	02.02.21թ	ICSID վարույթում գտնվող Էդմոնդ Խուդյանը և «Արին կապիտալ» ներդրումային ՍՊԸ-ն ընդեմ ՀՀ-ին ARB/17/36 գործով ՀՀ-ի շահերը պաշտպանելու համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների ու այցելությունների մասով՝ ըստ տեխ բնութագրի:	285.26	148,755.0
2	LALIVE	01.02.21թ	«Կորսան Կորվիամ կոնստրուկցիոն» ընկերության դեմ հարուցված արբիտրաժային գործի շրջանակում արբիտրաժային տրիբունալի կազմավորմանը, նախնական դատավարական գործընթացներին, ՀՀ հայցի նախապատրաստմանը, Մադրիդի թիվ 1 առևտրային Դատարանում դատավարական գործընթացներին ուղղված ծառայություններ:	25.2	13,130.0
3	Linklaters S.L.P.	17.03.21թ	ՀՀՏԿԵՆ և «Կորսան Կորվիամ կոնստրուկցիոն» ընկերության միջև կնքված N T1-T2-CW01 պայմանագրի շրջանակներում իսպանական դատարաններում ՀՀ շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով Մադրիդում գործող Linklaters S.L.P. Ընկերությանը 2020թ հունիսի 9-ից մինչև հոկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում մատուցված ծառայությունների համար	127.8 հազ. եվրո	80,879.3
4	JAMS Վեճերի այլընտրանքային լուծման կենտրոն	18.01.21թ	JAMS կենտրոնի վարույթում գտնվող «Գլոբալ Մեդիքալ Սոլյուշնս ընդդեմ ՀՀ-ի» թիվ 1425032969 հաշտարարության գործով, մատուցված հաշտարարի ծառայությունների դիմաց	0.7	343.2
5	Գաղտնի	11.03.21թ		98.0	51,797.9
Ընդամենը շահութահարկ					61,167.8
	Ընդամենը				356,073.2

«STEPTOE & JOHNSON» ընկերություն. Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ICSID) վարույթում գտնվող Էդմոնդ Խուդյանը և «Արին Կապիտալ» ներդրումային ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության թիվ ARB/17/36 ներդրումային արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1621-Ն որոշմամբ Նյու Յորքում և Վաշինգտոնում գործող «STEPTOE & JOHNSON» ընկերության հետ կնքել 280.0 հազ. ԱՄՆ դոլար (չի ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի հարկերը) ընդհանուր գումարով փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր: Հիմք ընդունելով

վերը նշվածը 2021 թվականի հունվարի 8-ին կնքվել է «Պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պետական գնման ARB17/36 պայմանագիր, որի դրույթները տարածվում են 2019 թվականի սեպտեմբերի 17-ից հետո ծագած հարաբերությունների վրա: Ծառայությունները մատուցվել են 2019 թվականի սեպտեմբերի 17-ից մինչև 2020 թվականի մարտ ամիսը ըստ տեխնիկական բնութագրերի: Հիմք ընդունելով 2021 թվականի հունվարի 8-ի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տրված դրական եզրակացությունը, 2021 թվականի հունվարի 18-ի ստորագրված հանձման ընդունման ակտը, ինչպես նաև ՀՀ կառավարության թիվ 2215-Ն որոշումը, ընկերության կողմից ներկայացված 2020 թվականի օգոստոսի 17-ի հաշվարկային (հաշիվ ապրանքագիր) փաստաթղթերը, 2021 թվականի փետրվարի 2-ին ընկերությանն է վճարվել 285,260.85 ԱՄՆ դոլարին համարժեք 148,754.9 հազ. դրամ (280.0 հազ. ԱՄՆ դոլար գումար մատուցված իրավաբանական ծառայությունների համար, համաձայն պայմանագրի, և 5.26 հազ. ԱՄՆ դոլար գումարը՝ Հայաստան այցի և սուրհանդակային ծառայությունների հետ կապված ծախսերի համար): Պայմանագրի 5.1 կետով նախատեսվում է վճարումներն իրականացնել ըստ վճարման ժամանակացույցի 2020 թվականի ապրիլից-դեկտեմբեր ամիսներին, սակայն Աշխատակազմի կողմից ներկայացված վճարման հանձնարարականի համաձայն վճարումը կատարվել է 2021 թվականի փետրվարի 2-ին:

«ԼԱԼԻՎ» միջազգային ընկերություն. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության միջև կնքված թիվ T1-T2-CW-01 պայմանագրի համաձայն ՄԱՄԱԻՀ (UNCITRAL) արբիտրաժային կանոնների ներքո 2019 թվականի հունվարի 24-ին «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության դեմ հարուցված արբիտրաժային վարույթում Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար 2019 թվականի նոյեմբերի 8-ին ՀՀ արդարադատության նախարարությունը (համաձայն 2020 թվականի ապրիլի 10-ի համաձայնագրի ՀՀ արդարադատության նախարարությունը պայմանագրով սահմանված իր բոլոր իրավունքները և պարտավորությունները անհատույց փոխանցել է ՀՀ վարչապետի աշխատակազմին) և «ԼԱԼԻՎ» ընկերությունը կնքել են պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման ARB/19/1 պայմանագիր: Պայմանագրի շրջանակներում «ԼԱԼԻՎ» ընկերության կողմից 2020 թվականի դեկտեմբերի 1-ից 31-ն ընկած ժամանակահատվածում մատուցվել են (համաձայն հանձման-ընդունման 2021 թվականի հունվարի 11-ի թիվ 29 արձանագրության, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ 2021 թվականի հունվարի 11-ի թիվ 29 ակտ)

արբիտրաժային տրիբունալի կազմավորման, ՀՀ հայցի նախապատրաստման, նախնական դատավարական գործընթացներին, Մադրիդի թիվ 1 Առևտրային դատարանում դատավարական գործընթացներին ուղղված ծառայություններ: Հաշվի առնելով ընկերության կողմից ներկայացված 2021 թվականի հունվարի 11-ի հաշվարկային (հաշիվ ապրանքագիր) փաստաթղթերը, հիմք ընդունելով 2021 թվականի հունվարի 11-ի ստորագրված հանձման-ընդունման ակտը, ինչպես նաև ARB/19/1 պայմանագրի 4.5 կետի դրույթները 2021 թվականի փետրվարի 1-ին ընկերությանն է վճարվել 25.21 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք 13,129.9 հազ. դրամ (24.85 հազ. ԱՄՆ դոլար գումար մատուցված իրավաբանական ծառայությունների համար, համաձայն պայմանագրի, և 356.79 ԱՄՆ դոլար գումարը՝ սուրհանդակային ծառայությունների հետ կապված ծախսերի համար):

«LINKLATERS S.L.P.» ընկերություն. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի թիվ 1154-Ն որոշումը, որով սահմանվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (նախկինում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն) և «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության միջև կնքված թիվ T1-T2-CW01 պայմանագրի շրջանակներում իսպանական դատարաններում ՀՀ շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով ներգրավել Մադրիդում գործող «Linklaters S.L.P.» ընկերությանը, վերջինիս հետ 2020 թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ վարչապետի աշխատակազմը 420.0 հազար եվրո ընդհանուր արժողությամբ փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման թիվ 11-20 պայմանագիր է կնքել, որը ունի հետադարձ ուժ և գործում է 2020 թվականի հունիսի 9-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրի շրջանակներում «Linklaters S.L.P.» ընկերության կողմից 2020 թվականի հունիսի 9-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում մատուցվել են (համաձայն հանձման-ընդունման 2021 թվականի մարտի 9-ի ակտի, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 2021 թվականի մարտի 5-ի դրական եզրակացության) ծառայություններ՝ զուգահեռ վարույթներում (արբիտրաժ/սնանկություն) առաջ շարժվելու վերաբերյալ ռազմավարական խորհրդատվություն, պայմանագրի լուծմանը և երաշխիքների վերադարձին առնչվող բողոքի դեմ պաշտպանություն, Կորսանի կողմից սնանկության առնչությամբ ներկայացված այլ բողոքների դեմ ՏԿԵՆ-ի լիարժեք իրավաբանական ներկայացուցչություն, բանկերի կողմից երաշխիքները վճարելու համար խոչընդոտ հանդիսացած խափանման միջոցի բողոքարկում, բողոքարկումներ սնանկության դատարանի արբիտրաժային համաձայնության իրավաբանական ուժը կասեցնելու որոշման առնչությամբ փաստաթղթերի վերանայում և վերլուծություն: Հաշվի առնելով ընկերության կողմից

ներկայացված 2021 թվականի հունվարի 28-ի հաշվարկային (հաշիվ ապրանքագիր) փաստաթղթերը, հիմք ընդունելով 2021 թվականի մարտի 5-ին ստորագրված հանձման ընդունման ակտը, ինչպես նաև 11-20 պայմանագրի 5.1 կետի դրույթները 2021 թվականի մարտի 17-ին ընկերությանն է վճարվել 127.83 հազ. եվրոյին համարժեք 80,879.28 հազ. դրամ (112.60 հազ. եվրո մատուցված իրավաբանական-փաստաբանական ծառայությունների համար, համաձայն պայմանագրի, և 15.235 հազար եվրո գումարը՝ թարգմանչական ծախսերի և ճանապարհածախսի համար):

Աշխատակազմի կողմից ներկայացված վճարման հանձնարարականի համաձայն վճարումը կատարվել է 2021 թվականի մարտի 17-ին, սակայն պայմանագրի հավելված Գ-ի (վճարման ժամանակացույց) համաձայն վճարումները նախատեսվում է իրականացնել հուլիս ամսից:

«ՋԱՄՍ» վեճերի այլընտրանքային լուծման կենտրոն. «ՋԱՄՍ» վեճերի այլընտրանքային լուծման կենտրոնի վարույթում գտնվող «Գլոբալ Մեդիքալ Սոլյուշնս ընդդեմ Հայաստանի Հանրապետության» թիվ 1425032969 հաշտարարության գործով, կենտրոնի և հաշտարարի կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված ծախսերը հոգալու նպատակով, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1773-Ն որոշմամբ կենտրոնը և ՀՀ վարչապետի աշխատակազմը 2020 թվականի նոյեմբերի 6-ին կնքել են պայմանագիր: Հիմք ընդունելով «ՋԱՄՍ» կենտրոնի կողմից ներկայացված 2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 5509490 հաշվարկային փաստաթղթերը 2021 թվականի հունվարի 18-ին կենտրոնին է վճարվել 653 ԱՄՆ դոլարին համարժեք 343.2 հազ. դրամ:

Ծրագիր՝ «1223 Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում»

Միջոցառում՝ 12002 «Միջազգային արբիտրաժային տրիբունալի կամ օտարերկրյա ներպետական դատարանի ծախսերի վճարում»

Հոդված՝ 4861 «Այլ ծախսեր»

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով 12002 «Միջազգային արբիտրաժային տրիբունալի կամ օտարերկրյա ներպետական դատարանի ծախսերի վճարում» միջոցառման 4861 «Այլ ծախսեր» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է 146,058.0 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 146,058.0 հազ.դրամ, փաստը (դրամարկղային ծախս) և փաստացի ծախսը՝ 131,100.0 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 89.8%-ով:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով

արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների» հաշվետվության միջոցառման շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում պլանավորված արբիտրաժային վարույթների քանակը 2-ն է: Հաշվետու ժամանակահատվածում ներկայացվել է նախատեսված 2-ից միայն 1-ի՝ ARB/18/28 գործի վերաբերյալ վճարում կատարելու համար անհրաժեշտ փաստաթղթեր: Աշխատակազմի կողմից որպես վճարման հիմք ներկայացվել է Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի քարտուղարության նամակ-գրությունը:

Ընդունված վարույթը Ջ. Բորկովսկին և Ռասիա ՖԶԷ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության թիվ ARB/18/28 ներդրումային արբիտրաժային գործն է: Այս գործի շրջանակներում արբիտրաժային լսումները իրականացնելու համար և ընթացակարգային ծախսերը հոգալու համար կողմերը պետք է կանխավճարներ կատարեն Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնին (ICSID): Ըստ Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի գնահատման՝ բոլոր ծախսերը միասին կազմում է 500.0 հազար ԱՄՆ դոլար: Համաձայն Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ICSID) վարչական և ֆինանսական կարգավորումների 14(3) կետի՝ եթե Տրիբունալը չի որոշել կամ վեճի կողմերը ծախսերի բաժանման շուրջ այլ կերպ չեն պայմանավորվել՝ յուրաքանչյուր կողմ վճարում է պահանջվող կանխավճարի կեսը: Հետևաբար, յուրաքանչյուր կողմի կանխավճարային գումարը կազմում է համապատասխանաբար 250.0 հազար ԱՄՆ դոլար:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի թիվ 2215-Ն որոշման 3-րդ, 4-րդ և 6-րդ հավելվածները, ինչպես նաև Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի քարտուղարությունից ստացված նամակ-գրությունը՝ 2021 թվականի փետրվարի 9-ին 131,100.0 հազ. դրամը փոխանցել է Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնին:

4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Առկա են անհամապատասխանություններ՝

1. 1136-11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման շրջանակում Աշխատակազմի և «Ձեռնարկությունների ինկուբատոր», «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամների, «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի միջև կնքված դրամաշնորհի հատկացման պայմանագրերի 3.6 և 3.8 կետերի պահանջների հետ:

Համաձայն պայմանագրի 3.6 կետի՝ յուրաքանչյուր ամսվա հաշվետվությունը հաստատելուց հետո և կազմակերպության կողմից հաջորդ ամսվա հայտ ներկայացնելու դեպքում, 5 աշխատանքային օրվա ընթացքում ԾԿԳ-ն իրականացնում է հաջորդ ամսվա համար կանխավճարային վճարում, իսկ պայմանագրի 3.8 կետի՝ յուրաքանչյուր ամսվա վճարումները նվազեցվում են նախորդ ամսվա անընդունելի ծախսի գումարի չափով կամ չօգտագործված գումարի մասով: 2021 թվականի առաջին եռամսյակում վերոնշյալ դրույթները չեն կիրառվել:

2. 1136-11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման շրջանակում Աշխատակազմի և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի միջև կնքված պայմանագրի 3.4 կետի պահանջի հետ:

Համաձայն պայմանագրի 3.4 կետի՝ պայմանագրի ժամկետի ընթացքում, յուրաքանչյուր ամսվա ավարտին Կազմակերպությունը աշխատակազմին է ներկայացնելու հարկային հաշիվ տվյալ ամսվա ընթացքում կատարած ծախսերի գումարի չափով, սակայն հունվար, փետրվար և մարտ ամիսներին, պայմանագրով նախատեսված փաստաթղթերը իրականում ԾԿԳ չեն ներկայացվել և այդ ամիսների համար պայմանագրով նախատեսված կարգով վճարումներ չեն կատարվել:

3. 1223-11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման շրջանակում Աշխատակազմի և «STEPTOE & JOHNSON» ընկերության հետ կնքված պայմանագրի 5.1 կետի պահանջի հետ:

Պայմանագրի 5.1 կետով նախատեսվել է վճարումներ կատարել ըստ վճարման ժամանակացույցի, սակայն Աշխատակազմի կողմից վճարումը կատարվել է ժամանակացույցով չսահմանված ժամկետում:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Համաձայն ՀՀ վարչապետի 11.02.2021 թվականի թիվ 121-Ա որոշման՝ Աշխատակազմի հաստիքների քանակը սահմանվել է 696: 1136-11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով աշխատավարձի ֆոնդից հունվար-մարտ ամիսներին վճարումներն իրականացվել են համապատասխանաբար՝ 540, 539, 534 աշխատակցի հաշվով և եռամսյակի ընթացքում 156-162 հաստիք չի համալրվել:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Չեն պահպանվել 1136-11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման իրականացման շրջանակում Աշխատակազմի և «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ», «Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամ», «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի միջև կնքված դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագրերի 3.6 և 3.8 կետերի պահանջների կատարումը:
2. Չի պահպանվել 1136-11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման իրականացման շրջանակում Աշխատակազմի և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագրի 3.4 կետի պահանջի կատարումը:
3. Չի պահպանվել 1223-11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման շրջանակում Աշխատակազմի և «STEPTOE & JOHNSON» ընկերության հետ կնքված պայմանագրի 5.1 կետի պահանջը:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Քննարկել Աշխատակազմում թափուր հաստիքների առկայության նպատակահարմարությունը:

Հաշվեքննության իրականացման ընթացքում հաշվեքննվող օբյեկտից ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հայտնաբերված փաստերը էական և համատարած բնույթ չեն կրում:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ ներկայացվել է գրավոր բացատրություն (կցվում է), առարկություններ չեն ներկայացվել:

ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյան

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 132-Ա որոշման հիման վրա «Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմում 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքի» շրջանակներում հաշվեքննության արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) մեջ նշվածների վերաբերյալ հայտնում եմ՝

«1223. Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում» ծրագրի «11001. Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» և «12002. Միջազգային արբիտրաժային տրիբունալի կամ օտարերկրյա ներպետական դատարանի ծախսերի վճարում» միջոցառումների շրջանակներում՝

1. **Բյուջեի կատարողականի վերաբերյալ**

Արձանագրությամբ նշվում է, որ ՀՀ 2021թ. պետական բյուջեով 11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացման ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման 4861 «Այլ ծախսեր» հոդվածով հաշվետու ժամանակաշրջանում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 59.4%-ով:

Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ բյուջեի հատկացման նպատակով Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը (այսուհետ՝ «Գրասենյակ») նախատեսում է ապագա ծախսերի մոտավոր և առավելագույն սահմանաչափ բյուջեի հատկացման պահանջի ներկայացման օրվա դրությամբ ընթացիկ արբիտրաժային, դատական և այլ վարույթների շրջանակներում, իսկ տարվա ընթացքում փորձում է հատկացված/բաշխված միջոցներն օգտագործել հնարավորինս խնայողաբար: Արդյունքում, նշված հոդվածով բյուջեի կատարողականը գնահատվել է ընդհանուր 59.4%:

2. **“Steptoe & Johnson” LLP-ին կատարված վճարման վերաբերյալ**

Արձանագրությամբ մատնանշվում է, որ “Steptoe & Johnson” LLP-ին (սույն մասում այսուհետ՝ «Ընկերություն») «Պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պետական գնման» 2021թ. հունվարի 8-ին կնքված N ARB/17/36 պայմանագրի (սույն մասում այսուհետ՝ «Պայմանագիր») հիման վրա վճարումը կատարվել է 2021թ. փետրվարի 2-ին, մինչդեռ Պայմանագրի 5.1 կետով նախատեսվել է վճարումներն իրականացնել ըստ վճարման ժամանակացույցի՝ 2020թ. ապրիլից-դեկտեմբեր ամիսներին:

Այս առնչությամբ անհրաժեշտ է հաշվի առնել, որ Պայմանագրի կնքման գործընթացն Ընկերության հետ պատշաճ կազմակերպվել է. Ընկերությունն ԱՄՆ-ից պահանջված կարգով ուղարկել է Պայմանագրի բնօրինակները, որոնք ՀՀ կողմից ընդունվել և կնքվել են 2021թ. հունվարի 8-ին: Գրասենյակը միջոցներ է ձեռնարկել մատուցված ծառայությունների

դիմաց Ընկերության վճարումն ապահովել 2020թ. ընթացքում՝ համաձայն վճարման ժամանակացույցի, սակայն վճարումն իրականացնել հնարավոր չի եղել պետական բյուջեի միջոցների սղության պատճառով: Ընկերության հետ նամակագրության միջոցով համաձայնեցվել է մատուցված ծառայությունների հանձնում-ընդունումը կատարել և համապատասխան վճարումն ապահովել 2021 թվականին, ինչի կապակցությամբ Ընկերության կողմից առարկություններ և դժգոհություններ չեն եղել: Ավելին, կողմերը քայլեր են ձեռնարկել Պայմանագրի վճարման ժամանակացույցը փոփոխելու ուղղությամբ, և փոփոխության բնօրինակն ԱՄՆ-ից սպասվում է առաջիկայում:

3. “LINKLATERS S.L.P.” ընկերությանը կատարված վճարման վերաբերյալ

Արձանագրությամբ մատնանշվում է, որ “LINKLATERS S.L.P.” ընկերությանը (սույն մասում այսուհետ՝ «Ընկերություն») «Պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պետական գնման» 2020թ. նոյեմբերի 27-ին կնքված N 11-20 պայմանագրի (սույն մասում այսուհետ՝ «Պայմանագիր») հիման վրա վճարման մասը կատարվել է 2021թ. մարտի 17-ին, մինչդեռ Պայմանագրի 5.1 կետով նախատեսվել է վճարումներն իրականացնել ըստ վճարման ժամանակացույցի՝ 2020թ. հուլիսից-դեկտեմբեր ամիսներին:

Այս առնչությամբ անհրաժեշտ է հաշվի առնել, որ Պայմանագրի 5.1.2 կետի համաձայն՝ *«Ծառայության վճարի մնացած մասի վճարումը կատարվում է Կողմերի կողմից ստորագրված Հանձնման-ընդունման արձանագրության և Կատարողի կողմից ներկայացված հաշվարկային փաստաթղթի հիման վրա՝ Կողմերի կողմից Հանձնման-ընդունման արձանագրությունը երկուստեք ստորագրվելու և Կատարողի կողմից հաշվարկային փաստաթղթերը (հարկային հաշիվը և ժամաթերթերը) ներկայացվելու օրվանից 30 (երեսուն) Բանկային օրվա ընթացքում: Եթե Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է տվյալ ամսվա 20-ից հետո և Ծառայությունների վճարման ժամանակացույցով (Հավելված Գ) նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 30 (երեսուն) Բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը»:*

Սույն կետի բովանդակությունից բխում է, որ թեև ընդհանուր կանոնի համաձայն վճարումները կատարվում են «*հանձնման-ընդունման արձանագրության և Կատարողի կողմից ներկայացված հաշվարկային փաստաթղթի հիման վրա՝ Կողմերի կողմից Հանձնման-ընդունման արձանագրությունը երկուստեք ստորագրվելու և Կատարողի կողմից հաշվարկային փաստաթղթերը (հարկային հաշիվը և ժամաթերթերը) ներկայացվելու օրվանից 30 (երեսուն) Բանկային օրվա ընթացքում»,* վճարումները պետք է ամեն դեպքում կատարվեին ոչ ուշ, մինչև 2020թ. դեկտեմբերի 20-ը՝ համաձայն վճարման ժամանակացույցի:

Միաժամանակ, Պայմանագրի 10.3 կետի համաձայն՝ այն պարագայում, երբ հակասություններ են առաջանում Պայմանագրի դրույթների և Պայմանագրի հավելվածների միջև, գերակայում են Պայմանագրի դրույթները: Այսինքն՝ Պայմանագրի հիման վրա վճարումները կատարելիս կողմերը պետք է առաջնորդվեն Պայմանագրի 5.1.2 կետի պահանջներով:

Բացի այդ, հարկ է նկատել, որ ծառայությունների դիմաց վճարման վրա ազդում են բազմաթիվ գործոններ. դատավարության ընթացքը և զարգացումները, որոնք կարող են պահանջել Ընկերության առավել կամ պակաս ներգրավվածություն և աշխատանքի ծավալ, դատավարության ձգձգումները՝ պայմանավորված տարբեր հանգամանքներով՝ ներառյալ դատավորի զբաղվածությունը, դատավարության ընթացքում դատավորի փոփոխությունը, COVID-19 համավարակը, ՀՀ առարկություններն Ընկերության ներկայացրած աշխատանքների և ծախսած ժամերի վերաբերյալ, գնիջեցմանը և Ընկերության կողմից գնի առավելագույն սահմանաչափի պահպանմանն ուղղված քննարկումները ու փոփոխված հաշվարկային փաստաթղթերի ներկայացման գործընթացը, և ի վերջո պետական բյուջեում համապատասխան միջոցների առկայությունը կամ բացակայությունը և այլն: Այսինքն, Գրասենյակն օբյեկտիվորեն ի սկզբանե չի կարող կանխատեսել գործի հետ կապված հստակ զարգացումները և մշակել դրան կատարելապես համապատասխանող վճարման ժամանակացույց: Այլ կերպ ասած, Գրասենյակի տեսանկյունից ծառայությունների վճարման ժամանակացույցը՝ որպես Պայմանագրի մաս, զուտ ուղենիշային փաստաթուղթ է, որը մշակվում է ձևական/ֆորմալիստիկ և գնումների օրենսդրության պահանջների պահպանման նպատակով: Ի վերջո, կողմերի միջև իրավահարաբերությունները պայմանագրային բնույթի են և հետագա լրացուցիչ փոխադարձ պայմանավորվածությամբ վերջիններս կարող են նախատեսել սկզբնականից տարբերվող վճարման ժամկետներ և արժեքներ:

Ամեն դեպքում, վճարման ժամանակացույցում նշված գումարն առավելագույն սահմանաչափ է, որը Գրասենյակը փորձում է խստորեն պահպանել՝ անկախ վճարման ժամկետներից: Գրասենյակի փորձը ցույց է տալիս, որ մեծամասամբ իրավաբանական ընկերությունները հակված են անընդհատ ուռճացնել կատարված աշխատանքը և նախատեսվածից ավելի շատ գումար պահանջել, առաջարկել պայմանագրի գնի վերանայում, և այլն, որին Գրասենյակը միշտ ստիպված է լինում հակազդել:

4. JAMS վեճերի այլընտրանքային լուծման կենտրոնին կատարված վճարման վերաբերյալ

Արձանագրությամբ հիշատակվում է, որ JAMS վեճերի այլընտրանքային լուծման կենտրոնը (սույն մասում այսուհետ՝ «Կենտրոն») և ՀՀ վարչապետի աշխատակազմը 2020թ. նոյեմբերի 6-ին կնքել են պայմանագիր (սույն մասում այսուհետ՝ «Պայմանագիր»)՝ 12,500 հազար ԱՄՆ դոլարին համարժեք ընդհանուր գումարով: Արձանագրությունը հղում է կատարում ՀՀ կառավարության 2020թ. նոյեմբերի 4-ի N 1773-Ն որոշմանը, որը համապատասխան մասով ձևակերպված է հետևյալ կերպ. *«JAMS վեճերի այլընտրանքային լուծման կենտրոնի վարույթում գտնվող «Գլոբալ Մեդիքալ Սոլյուշնս ընդդեմ Հայաստանի Հանրապետության» (Global Medical Solutions vs. Government of the Republic of Armenia) թիվ 1425032969 հաշտարարության գործով կենտրոնի և հաշտարարի կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված ծախսերը հոգալու նպատակով կնքել պայմանագիր JAMS վեճերի այլընտրանքային լուծման կենտրոնի հետ և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին 2020 թվականին հատկացնել 12,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (ներառյալ՝ օրենքով սահմանված կիրառելի հարկերը)»*:

Նշված որոշումը նախատեսում է երկու գործողություն՝ 1) կնքել պայմանագիր և 2) հատկացնել դրամական միջոցներ, սակայն Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, որ նշված 12,500 ԱՄՆ դոլարը Կենտրոնի հետ կնքված Պայմանագրի արժեքը չէ, այլ Գրասենյակի կողմից նախապես գնահատված, Պայմանագրի շրջանակներում հնարավոր ծախսերի արժեքը: Կնքված Պայմանագիրը ֆիքսված գին չի նախատեսում: Այն պարզապես պարունակում է հաշտարարի ժամային և օրական դրույքաչափերի և Կենտրոնի ծառայությունների դիմաց վճարումների բացվածքը, իսկ ծառայության ընդհանուր/վերջնական գումարը գոյանում է հաշտարարի փաստացի ծախսած ժամերից/օրերից ու Կենտրոնի մատուցած ծառայությունների ընդհանուր արժեքից: Ընդ որում, հաշտարարի ծառայությունների դիմաց վճարումը ևս կատարվում է Կենտրոնին: Սույն դեպքում հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի հիման վրա Կենտրոնին կատարվել է ընդամենը 653 ԱՄՆ դոլարին համարժեք վճարումը՝ հատկացված 12,500 ԱՄՆ դոլարի շրջանակներում: Բացի այդ, պետք է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ հատկացված գումարից վճարումներ են կատարվել նաև նախորդ հաշվետու ժամանակաշրջանում: Այսպիսով, Գրասենյակն առաջարկում է Պայմանագրի գնի վերաբերյալ Արձանագրության մեջ տեղ գտած տեղեկատվությունը ճշգրտել:

5. **«Ջ. Բորկովսկին և Ռասիա ՖԶԷ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության» թիվ ARB/18/28 արբիտրաժային գործով ICSID կենտրոնին կատարված կանխավճարի վերաբերյալ**

Արձանագրության մեջ նշվում է, որ Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնին (սույն մասում այսուհետ՝ «Կենտրոն») հիշատակված գործով կանխավճարը կատարվել է, ի թիվս այլոց, Կենտրոնի քարտուղարությունից ստացված նամակ-գրության հիման վրա՝ Կենտրոնի գնահատմամբ սահմանված արժեքով: Պարզաբանման նպատակով հարկ է նկատել, որ նամակ-գրությունը հիմնված է Կենտրոնի ֆինանսական և վարչական 14-րդ կանոնակարգի 3-րդ մասի վրա, և կանխավճարի չափը որոշվել է Կենտրոնի կողմից արբիտրաժային տրիբունալի նախագահի հետ խորհրդակցելու արդյունքում: Ընդ որում, ՀՀ-ն, «Պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի լուծման մասին» (ICSID) կոնվենցիային անդամակցելու ուժով, ընդունել է նաև նշված ֆինանսական և վարչական կանոնակարգերը, որոնք և հիմք են հանդիսացել քննարկվող կանխավճարի կատարման համար: Ամեն դեպքում, ICSID-ին կատարված վճարման առնչությամբ Արձանագրությամբ որևէ խախտում կամ բացթողում չի հաշվառվել:

«1136. ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «11011. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման՝ «Ձեռնարկությունների հիմնադրամի», «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի պայմանագրերի շրջանակներում արձանագրությամբ նշված անհամապատասխանությունների վերաբերյալ հայտնում ենք, որ երեք կազմակերպությունների դրամաշնորհային պայմանագրերում կկատարվեն փոփոխություններ, պայմանագրերի համապատասխան կետերի պահանջների կատարումը հստակեցնելու նպատակով: «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից

2021 թվականի հունվար, փետրվար, մարտ ամիսների համար փաստաթղթեր չներկայացնելու փաստը կապված է եղել համաշխարհային բանկի հետ համաձայնեցված 2021 թվականի տարեկան բյուջեի փոփոխության հետ, որից հետո 2021 թվականի մայիսի 15-ին պայմանագրում կատարվել է փոփոխություն: Ներկայացված փաստաթղթերի ստուգումից հետո առաջին վճարումը կատարվել է մայիսի 17-ին:

Վարչապետի աշխատակազմի ֆինանսական
և հաշվապահական հաշվառման
վարչության պետ Ս. Սահաղյան